ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 1
№ ԲԸԱՇՁԲ-10/18-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **30.06.2015թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունն, ի դեմս Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Ստրոյսիթի» ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Ս. Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կապալառու, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 05.08.2013թ. կնքված № ԲԸԱՇՁԲ-10/18-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2 կետը, Պայմանագրին կից 04.02.2015թ կնքված N 3 Համաձայնագրի 3.3 կետը, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 71-րդ կետի 3-րդ ենթակետը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով շինարարության նախագծային աշխատանքներն իրականացրած «Իսախանյան եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից տրված նախահաշվի փոփոխության մասնագիտական եզրակացությունը այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է պայմանագրի արդյունավետ իրականացմանը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին փոփոխել Պայմանագիրը, մասնավորապես՝ «Զորանքարայում բնակելի շենքի վերանորոգման (50 բնակարան)» աշխատանքների՝ 2015թ. II եռամսյակում կատարման ենթակա ծավալներից 15 369 510 դրամի աշխատանքները փոխարինել 15 126 025 դրամի աշխատանքներով: Արդյունքում Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 389 183 841 (երեք հարյուր ութսունինը միլիոն հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր քառասունմեկ) դրամ, իսկ N 3 Համաձայնագրի գինը՝ 108 468 741 (հարյուր ութ միլիոն չորս հարյուր վաթսունութ հազար յոթ հարյուր քառասունմեկ) դրամ:

1.2 Փոփոխված աշխատանքների գնումն իրականացվում է 2015թ. 2-րդ եռամսյակում, իսկ դրանց դիմաց վճարումն իրականացվում է N 3 Համաձայնագրի 2.2 կետին համապատասխան՝ ըստ եռամսյակների՝ սկսած երկրորդից, աճողական կարգով:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Աշխատանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն փոփոխությամբ նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ստրոյսիթի» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	Վայոց Ձորի մարզ, գ. Ռինդ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՎՏԲ Հայաստան բանկ» Եղեգնաձորի մ/ճ
Հ/հ 900011117034	Հ/Հ 16016107997700
ՀՎՀՀ 02703824	ՀՎՀՀ 08908571
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ- ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-10/18» ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում 2013թ-ի օգոստոսի 5-ին կնքված N ԲԸԱՇՁԲ-10/18-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր), ինչպես նաև դրան կից 04.02.2015թ կնքված N 3 Համաձայնագրում (այսուհետև՝ Համաձայնագիր) 2015թ-ի հունիսի 30-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պատվիրատուի մոտ առաջացել է Պայմանագրով նախատեսված աշխատանքների տեխնիկական բնութագրի փոփոխության անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը, հիմք ընդունելով շինարարության նախագծային աշխատանքներն իրականացրած «Իսախանյան եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից տրված նախահաշվի փոփոխության մասնագիտական եզրակացությունը այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է պայմանագրի արդյունավետ իրականացմանը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին փոփոխել Պայմանագիրը, մասնավորապես՝ «Զոբանքարայում բնակելի շենքի վերանորոգման (50 բնակարան)» աշխատանքների՝ 2015թ. II եռամսյակում կատարման ենթակա ծավալներից 15 369 510 դրամի աշխատանքները փոխարինել 15 126 025 դրամի աշխատանքներով: Արդյունքում Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 389 183 841 (երեք հարյուր ութսունինը միլիոն հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր քառասունմեկ) դրամ, իսկ N 3 Համաձայնագրի գինը՝ 108 468 741 (հարյուր ութ միլիոն չորս հարյուր վաթսունութ հազար յոթ հարյուր քառասունմեկ) դրամ:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.2 և Համաձայնագրի 3.3 կետերը: Առկա է մասնագիտական եզրակացություն այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է Պայմանագրի արդյունավետ իրականացմանը, բացի այդ, սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: ***Ընդունել ի գիտություն, որ փոփոխության ենթակա պայմանագրով նախատեսված աշխատանքի գնման գործընթացը սկսվել է մինչև ՀՀ կառավարության 30.01.2015 թվականի N 105-Ն որոշման ուժի մեջ մտնելը:***

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ 010-66-24-94:
Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:
Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն: